

Մ ԱՐԴ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՌՉԱԿԱԳԻՐ

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Հասարակական տեղեկատվության բաժին

1948 թվականի դեկտեմբերի 10-ին Միավորված ազգերի կազմակերպության Ընդհանուր Ժողովն ընդունեց ու ազդարարեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, որի ամբողջական տեքստն ամփոփված է գրքույկի հաջորդ էջերում:

Պատմական նշանակություն ունեցող այս որոշումն ընդունելուց հետո Ժողովը բոլոր անդամ պետություններին կոչ արեց հրապարակել Հռչակագրի տեքստը և անել ամեն ինչ փաստաթղթի «տարածման, հրապարակման ու մեկնաբանման համար, գլխավորապես դպրոցներում և այլ ուսումնական հաստատություններում, առանց երկրների կամ տարածքների քաղաքական կարգավիճակի տարբերակման:

Խավիեր Պերես դե Կուելյար
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Բոլոր մարդիկ ծնվում են հավասար ու անօտարելի իրավունքներով և հիմնական ազատություններով:

Միավորված ազգերը պարտավորություն է ստանձնել պահպանել, խրախուսել ու պաշտպանել յուրաքանչյուր անհատ մարդու իրավունքները: Այս պարտավորությունը բխում է Միավորված ազգերի կանոնադրությունից, որը վերահաստատում է աշխարհի ժողովուրդների հավատարմարդու հիմնական իրավունքների, անձի արժանապատվության ու արժեքի նկատմամբ:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում Միավորված ազգերի կազմակերպութ յունը պարզ ու հասկանալի ձևով ներկայացրել է այն իրավունքները, որոնք հավասարապես պատկանում են յուրաքանչյուր մարդու:

Այս իրա վունքները պա տկա նում են ձեզ: Սրանք ձեր իրա վունքներն են: Ծանոթացեք դրանց: Աջակցեք այդ իրա վունքներին, պաշտպանեք դրանք հանուն ձեզ և ձեր եղբայրակիցների:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԸՆԴ ՀԱՆՈՒՐ ՀՌԶԱԿԱԳԻՐ

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Քանզի մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվությունը և հավասար ու անօտարելի իրավունքները աշխարհի ազատության, արդարության ու խաղաղության հիմքն են.

Քանզի մարդու իրավունքների նկատմամբ քամահրանքն ու արհամարհանքը հանգեցրել են մարդկության խիղճը խռոված բարբարոսական գործողությունների, և քանի որ այնպիսի աշխարհի ստեղծումը, ուր մարդիկ կվայելեն խոսքի ու համոզմունքների ազատություն և զերծ կլինեն վախից ու կարիքից հռչակվել է որպես մարդկանց բարձրագույն ձգտում.

Քանզի անհրաժեշտ է, որպեսզի մարդը, որպես մի վերջին միջոցի, չդիմի ապստամբության ընդդեմ բռնության ու ճնշման, օրենքի իշխանությամբ պաշտպանել մարդու իրավունքները.

Քանզի անհրաժեշտ է նպաստել ազգերի միջև բարեկամական հարաբերությունների զարգացմանը.

Քանզի Միավորված ազգերի ժողովուրդները կանոնադրության մեջ վերահավաստել են իրենց հավատը մարդու հիմնական իրավունքների, անձի արժանապատվության ու արժեքի, տղամարդու ու կֆոջ հավասար իրավունքների նկատմամբ և որոշել են ավելի մեծ ազատության պայմաններում նպաստել սոցիալական առաջընթացին ու կյանքի պայմանների բարելավմանը.

Քանզի անդամ պետությունները պարտավորվել են Միավորված ազգերի հետ համագործակցությամբ հասնել մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների նկատմամբ համընդհանուր հարգանքի ու դրանց պահպանման.

Քանզի այս իրավունքների ու ազատությունների համընդհանուր ըմբռնումը կարևորագույն նշանակություն ունի այս պարտավորությամբ և լիարժեք իրագործման համար.

ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՆ ազդարարում է այս

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԸՆԴ ՀԱՆՈՒՐ ՀՌԶԱԿԱԳԻՐԸ

որպես առաջադրանք բոլոր ժողովուրդներին ու ազգերին, որպեսզի յուրաքանչյուր անհատ և հասարակության յուրաքանչյուր մարմին, մտքում մշտապես ունենալով այս Հռչակագիրը, ձգտի ուսուցման ու կրթության միջոցով նպաստել այս իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգալից վերաբերմունքին և ազգային ու միջազգային առաջադիմական միջոցառումներով ապահովել դրանց համընդհանուր արդյունավետ ճանաչումն ու պահպանումը թե անդամ պետությունների ժողովուրդների և թե դրանց իրավասու տարածքների ժողովուրդների կողմից:

Հոդվա ծ 1

Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար իրենց արժանապատվությամբ ու իրավունքներով: Նրանք ունեն բանականություն ու խիղճ և միմյանց պետք է եղբայրաբար վերաբերվեն:

Հոդվա ծ 2

Ամեն ոք ունի այս Հռչակագրում բերված բոլոր իրավունքներն ու ազատությունները առանց որևէ խտրության՝ հիմնված ցեղային, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, ունեցվածքի, դասային պատկանելության կամ որևէ այլ կարգավիճակի վրա:

Ավելին, ոչ մի խտրականություն չպետք է լինի հիմնված երկրի կամ տարածքի, քաղաքական, իրավական, կամ միջազգային կարգավիճակի վրա, լինի դա անկախ, ինսամարկյալ, ոչ ինքնակառավարվող կամ ինքնիշխանության որևէ այլ սահմանափակումով պետական կազմավորում, որին պատկանում է մարդը:

Հոդվա ծ 3

Յուրաքանչյուր ոք ունի ապրելու, ազատության ու անձի անձեռնմխելիության իրավունք:

Հոդվա ծ 4

Ոչ ոք չպետք է լինի ստրկության կամ անազատ վիճակում. պետք է արգելվեն ստրկատիրության ու ստրուկների առուծախի բոլոր ձևերը:

Հոդվա ծ 5

Ոչ ոք չպետք է ենթարկվի կտտանքների, դաժան, անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի կամ պատժի:

Հոդվա ծ 6

Ամեն ոք, ուր էլ որ լինի, իրավունք ունի ճանաչվել որպես իրավասուբյեկտ:

Հոդվա ծ 7

Բոլորը հավասար են օրենքի առջև և, առանց որևէ խտրականության, ունեն օրենքով հավասար պաշտպանվելու իրավունք: Բոլորը ունեն հավասար պաշտպանության իրավունք՝

ընդդեմ ցանկացած խտրականության, որով խախտվում է այս Հռչակագիրը, և ընդդեմ նման խտրականության մղող ցանկացած սադրանքի:

Հոդվա ծ 8

Ամեն ոք ունի ազգային լիազոր դատարանների միջոցով իր իրա վունքների արդյունավետ վերականգնման իրավունք, եթե խախտվում են սահմանադրությամբ կամ օրենքով սահմանված նրա հիմնական իրավունքները:

Հոդվա ծ 9

Ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական կալանքի, բանտարկության կամ արտաքսման:

Հոդվա ծ 10

Ամեն ոք իր իրավունքների ու պարտականությունների սահմանման համար և իր դեմ ցանկացած քրեական մեղադրանքի դեպքում, լիակատար հավասարության հիման վրա, իրավունք ունի, որ իր գործը արդարացի ու հրապարակայնորեն լավի անկախ ու անկողմնապահ դատարանի կողմից:

Հոդվա ծ 11

(1) Հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր մարդ իրավունք ունի անմեղ համարվել քանի դեռ նրա մեղքը չի ապացուցված օրենքով նախատեսված հրապարակային դատաքննությամբ, որի ժամանակ ապահովվեն նրա պաշտպանության համար բոլոր անհրաժեշտ երաշխիքները:

(2) Ոչ ոք չի կարող դատապարտվել որպես հանցագործ որևիցե արարքի կամ բացթող ման համար, որը կատարվել է այնպիսի ժամանակ, երբ այն ազգային կամ միջազգային օրենքով հանցագործություն չի համարվել: Չի կարող սահմանվել նաև ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառվում էր հանցագործության կատարման ժամանակ:

Հոդվա ծ 12

Ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական միջամտության իր անձնական ու ընտանեկան կյանքի նկատմամբ, իր տան, թղթակցության և կամ իր պատվի ու համբավի դեմ կամայական ոտնձգության: Ամեն ոք ունի օրենքով պաշտպանվելու իրավունք ընդդեմ նման միջամտության կամ ոտնձգության:

Հոդվա ծ 13

(1) Ամեն ոք ունի տեղաշարժվելու և բնակության վայր ընտրելու ազատության իրավունք յուրաքանչյուր պետության սահմաններում:

(2) Ամեն ոք ունի ցանկացած երկրից, այդ թվում իր երկրից հեռանալու և իր երկիր վերադառնալու իրավունք:

Հոդվա ծ 14

(1) Ամեն ոք իրավունք ունի այլ երկրներում հետապնդումից ապաստան որոնել և ապաստանից օգտվել:

(2) Այս իրավունքը չի կարող գործադրվել այնպիսի ոչ քաղաքական հանցագործությունների կամ արարքների համար հարուցված հետապնդումների դեպքում, որոնք հակասում են Միավորված ազգերի նպատակներին ու սկզբունքներին:

Հոդվա ծ 15

(1) Ամեն ոք ունի քաղաքացիության իրավունք:

(2) Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել իր քաղաքացիությունից կամ քաղաքացիությունը փոխելու իրավունքից:

Հոդվա ծ 16

(1) Չափահաս տղամարդիկ ու կանայք, առանց որևէ ցեղային, ազգային կամ կրոնական սահմանափակման, իրավունք ունեն ամուսնանալ և ընտանիք հիմնել: Նրանք հավասար իրավունքներ ունեն ամուսնանալիս, ամուսնության ընթացքում և ամուսնալուծության ժամանակ:

(2) Ամուսնությունը կարող է կայանալ միայն ամուսնացող կողմերի լիարժեք ու ազատ համաձայնության դեպքում:

(3) **Ընտանիքը հասարակության բնական ու հիմնական բջիջն է և պաշտպանվելու իրավունք ունի հասարակության ու պետության կողմից:**

Հոդվա ծ 17

(1) Ամեն ոք ունի սեփականություն ունենալու իրավունք՝ ինչպես մենակ, այնպես էլ ուրիշների հետ միասին:

(2) Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել իր սեփականությունից:

Հոդվա ծ 18

Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի ու դավանանքի ազատության իրավունք. այս իրավունքը ներառում է իր դավանանքը կամ համոզմունքները փոխելու ազատություն և իր դավանանքին կամ համոզմունքներին հետևելու ազատություն, միայնակ կամ ուրիշների հետ համատեղ, հրապարակայնորեն կամ գաղտնի՝ քարոզի, ժամերգության, կրոնական ու ծիսական արարողությունների ձևով:

Հոդվա ծ 19

Ամեն ոք ունի համոզմունքներ ունենալու և արտահայտվելու իրավունք. այս իրավունքը ներառում է համոզմունքներին անարգել հավատարիմ մնալու և տեղեկություններ ու գաղափարներ որոնելու, ստանալու ու տարածելու ազատություն, լրատվության ցանկացած միջոցներով, անկախ պետական սահմաններից:

Հոդվա ծ 20

- (1) Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ու միություններ կազմելու իրավունք:
- (2) Ոչ ոք չի կարող հարկադրաբար անդամակցվել որևէ միության:

Հոդվա ծ 21

(1) Յուրաքանչյուր ոք իրավունք ունի մասնակցել իր երկրի կառավարմանը՝ անմիջաբար կամ ազատ ընտրված ներկայացուցիչների միջոցով:

(2) Յուրաքանչյուր ոք իր երկրում ունի պետական ծառայություն կատարելու հավասար իրավունք:

(3) Ժողովրդի կամքը պետք է լինի կառավարության իրավագործության հիմքը. այս կամքի արտահայտությունը պետք է լինեն պարբերական ու անեղծ ընտրությունները, որոնք պետք է իրագործվեն համընդհանուր ու հավասար ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկության կամ համարժեք ազատ ընտրական ընթացակարգերի միջոցով:

Հոդվա ծ 22

Յուրաքանչյուր ոք, որպես հասարակության անդամ, սոցիալական ապահովության իրավունք ունի, օգտվում է իր արժանապատվության և իր անձի ազատ զարգացման համար անհրաժեշտ տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքներից ազգային ջանքերի ու միջազգային համագործակցության միջոցով, յուրաքանչյուր պետության կառուցվածքին ու ռեսուրսներին համապատասխան:

Հոդվա ծ 23

(1) Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի, աշխատանքի ազատ ընտրության, արդարացի ու նպաստավոր աշատանքային պայմանների և գործազրկությունից պաշտպանվելու իրավունք:

(2) Յուրաքանչյուր ոք, առանց որևիցե խտրականության, ունի հավասար աշխատանքի դիմաց հավասարվարձատրության իրավունք:

(3) Յուրաքանչյուր ոք ունի արդարացի ու համապատասխան վարձատրության իրավունք, որով ապահովվի մարդկային արժանապատվությանը վայել իր ու իր ընտանիքը գոյությունը, իսկ անհրաժեշտությամբ և դեպքում լրացվի սոցիալական ապավության այլ միջոցներով:

(4) Յուրաքանչյուր ոք ունի իր շահերը պաշտպանելու համար արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունք:

Հոդվա ծ 24

Յուրաքանչյուր ոք ունի հանգստի ու ժամանցի, այդ թվում՝ աշխատանքային ժամերի չափավոր սահմանափակման և պարբերական վճարովի արձակուրդների իրավունք:

Հոդվա ծ 25

(1) Յուրաքանչյուր ոք ունի կենսամակարդակի իրավունք, որը իր և իր ընտանիքի համար ապահովի առողջություն և բարեկեցություն, այդ թվում՝ սնունդ, հագուստ, բնակարան ու բժշկական սպասարկում, անհրաժեշտ սոցիալական ծառայություններ և ապահովագրության իրավունք գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, այրիության, ծերության և այն դեպքերում, երբ գոյության միջոցների ձեռքբերումը չի պայմանավորված իրենից կախված հանգամանքներով:

(2) Մայրերն ու մանուկներն ունեն հատուկ հոգածության ու օժանդակության իրավունք: Բոլոր երեխաները՝ ծնված ամուսնությունից կամ արտասամուսնական կապերից, օգտվում են նույն սոցիալական պաշտպանությունից:

Հոդվա ծ 26

(1) Յուրաքանչյուր ոք ունի ունի կրթության իրավունք: Կրթությունը, առնվազան տարրական ու հանրակրթական փուլերում, պետք է լինի անվճար: Տարրական կրթությունը պետք է լինի պարտադիր: Տեխնիկական ու մասնագիտական կրթությունը լինելու է ընդհանուրի համար մատչելի, իսկ բարձրագույն կրթությունը՝ բոլորի համար հավասարապես մատչելի, հիմնվա ծ ընդունակությունների վրա :

(2) Կրթությունը պետք է նպատակաուղղված լինի անձի լիարժեք զարգացմանը և մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդմանը: Այն պետք է նպաստի բոլոր ազգերի, ցեղային կամ կրոնական խմբերի միջև փոխըմբռնմանը, հանդուրժողականությանն ու բարեկամությանը և էլ ավելի նպաստի Միավորված ազգերի խաղաղապահական գործունեությանը:

(3) Ծնող ներն ունեն իրենց երեխա և ներին տրվող կրթ ութ ութ յա և տեսա կի ընտրութ յա և ա ոա ջնա յին իրա վունք:

Հոդվա ծ 27

(1) Յուրաքանչյուր ոք ունի իր համայնքի մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու, արվեստը դրվատելու, գիտական առաջընթացին մասնակցելու և դրա բարիքներից օգտվելու իրավունք:

(2) Յուրաքանչյուր ոք պաշտպանության իրավունք ունի իր բարոյական ու նյութական շահերի համար, որոնք արդյունք են իր իսկ հեղինակած գիտական, գրական կամ գեղարվեստական ցանկացած աշխատանքի:

Հոդվա ծ 28

Յուրաքանչյուր ոք ունի սոցիալական ու միջազգային կարգուկանոնի իրավունք, որի դեպքում լիովին իրագործելի են այս Հռչակագրում շարադրված իրավունքներն ու ազատությունները:

Հոդվա ծ 29

(1) Յուրաքանչյուր ոք պարտականություններ ունի համանյքի նկատմամբ, ուր և միայն հնարավոր է իր անձի ազատ ու լիարժեք զարգացումը:

(2) Իր իրավունքներն ու ազատություններն իրականացնելիս, յուրաքանչյուր ոք պետք է ենթակա լինի միմիայն այնպիսի սահմանափակումների, որոնք օրենքով սահմանված են ուրիշների իրավունքների ու ազատությունների համար պատշաճ ճանաչում ու հարգանք ապահովելու և բարոյականության, հասարակական կարգուկանոնի ու ընդհանուր բարեկեցության արդարացի պահանջները ժողովրդավարական հասարակարգում բավարարելու համար:

(3) Այս իրավունքների ու ազատությունների իրականացումը ոչ մի դեպքում չպետք է հակասի Միացյալ ազգերի նպատակներին ու սկզբունքներին:

Հոդվա ծ 30

Այս Հռչակագրում ոչ մի բան չի կարող մեկնաբանվել որպես որևէ իրավունքի տրամադրում որևիցե պետության, մարդկանց խմբի կամ առանձին անձանց զբաղվելու մի որևէ գործունեությամբ կամ արարքով, որոնք ուղղված լինեն Հռչակագրում շարադրված ազատությունների ու իրավունքների ոչնչացմանը:

PREAMBLE

Whereas recognition of the inherent dignity and of the equal and inalienable rights of all members of the human family is the foundation of freedom, justice and peace in the world,

Whereas disregard and contempt for human rights have resulted in barbarous acts which have outraged the conscience of mankind, and the advent of a world in which

human beings shall enjoy freedom of speech and belief and freedom from fear and want has been proclaimed as the highest aspiration of the common people,

Whereas it is essential, if man is not to be compelled to have recourse, as a last resort, to rebellion against tyranny and oppression, that human rights should be protected by the rule of law,

Whereas it is essential to promote the development of friendly relations between nations,

Whereas the peoples of the United Nations have in the Charter reaffirmed their faith in fundamental human rights, in the dignity and worth of the human person and in the equal rights of men and women and have determined to promote social progress and better standards of life in larger freedom,

Whereas Member States have pledged themselves to achieve, in co-operation with the United Nations, the promotion of universal respect for and observance of human rights and fundamental freedoms,

Whereas a common understanding of these rights and freedoms is of the greatest importance for the full realization of this pledge,

Now, Therefore THE GENERAL ASSEMBLY proclaims THIS UNIVERSAL DECLARATION OF HUMAN RIGHTS as a common standard of achievement for all peoples and all nations, to the end that every individual and every organ of society, keeping this Declaration constantly in mind, shall strive by teaching and education to promote respect for these rights and freedoms and by progressive measures, national and international, to secure their universal and effective recognition and observance, both among the peoples of Member States themselves and among the peoples of territories under their jurisdiction.

Article 1.

All human beings are born free and equal in dignity and rights. They are endowed with reason and conscience and should act towards one another in a spirit of brotherhood.

Article 2.

Everyone is entitled to all the rights and freedoms set forth in this Declaration, without distinction of any kind, such as race, colour, sex, language, religion, political or other opinion, national or social origin, property, birth or other status. Furthermore, no distinction shall be made on the basis of the political, jurisdictional or international status of the country or territory to which a person belongs, whether it be independent, trust, non-self-governing or under any other limitation of sovereignty.

Article 3.

Everyone has the right to life, liberty and security of person.

Article 4.

No one shall be held in slavery or servitude; slavery and the slave trade shall be prohibited in all their forms.

Article 5.

No one shall be subjected to torture or to cruel, inhuman or degrading treatment or punishment.

Article 6.

Everyone has the right to recognition everywhere as a person before the law.

Article 7.

All are equal before the law and are entitled without any discrimination to equal protection of the law. All are entitled to equal protection against any discrimination in violation of this Declaration and against any incitement to such discrimination.

Article 8.

Everyone has the right to an effective remedy by the competent national tribunals for acts violating the fundamental rights granted him by the constitution or by law.

Article 9.

No one shall be subjected to arbitrary arrest, detention or exile.

Article 10.

Everyone is entitled in full equality to a fair and public hearing by an independent and impartial tribunal, in the determination of his rights and obligations and of any criminal charge against him.

Article 11.

(1) Everyone charged with a penal offence has the right to be presumed innocent until proved guilty according to law in a public trial at which he has had all the guarantees necessary for his defence.

(2) No one shall be held guilty of any penal offence on account of any act or omission which did not constitute a penal offence, under national or international law, at the time when it was committed. Nor shall a heavier penalty be imposed than the one that was applicable at the time the penal offence was committed.

Article 12.

No one shall be subjected to arbitrary interference with his privacy, family, home or correspondence, nor to attacks upon his honour and reputation. Everyone has the right to the protection of the law against such interference or attacks.

Article 13.

(1) Everyone has the right to freedom of movement and residence within the borders of each state.

(2) Everyone has the right to leave any country, including his own, and to return to his country.

Article 14.

(1) Everyone has the right to seek and to enjoy in other countries asylum from persecution.

(2) This right may not be invoked in the case of prosecutions genuinely arising from non-political crimes or from acts contrary to the purposes and principles of the United Nations.

Article 15.

(1) Everyone has the right to a nationality.

(2) No one shall be arbitrarily deprived of his nationality nor denied the right to change his nationality.

Article 16.

(1) Men and women of full age, without any limitation due to race, nationality or religion, have the right to marry and to found a family. They are entitled to equal rights as to marriage, during marriage and at its dissolution.

(2) Marriage shall be entered into only with the free and full consent of the intending spouses.

(3) The family is the natural and fundamental group unit of society and is entitled to protection by society and the State.

Article 17.

(1) Everyone has the right to own property alone as well as in association with others.

(2) No one shall be arbitrarily deprived of his property.

Article 18.

Everyone has the right to freedom of thought, conscience and religion; this right includes freedom to change his religion or belief, and freedom, either alone or in community with others and in public or private, to manifest his religion or belief in teaching, practice, worship and observance.

Article 19.

Everyone has the right to freedom of opinion and expression; this right includes freedom to hold opinions without interference and to seek, receive and impart information and ideas through any media and regardless of frontiers.

Article 20.

- (1) Everyone has the right to freedom of peaceful assembly and association.
- (2) No one may be compelled to belong to an association.

Article 21.

- (1) Everyone has the right to take part in the government of his country, directly or through freely chosen representatives.
- (2) Everyone has the right of equal access to public service in his country.
- (3) The will of the people shall be the basis of the authority of government; this will shall be expressed in periodic and genuine elections which shall be by universal and equal suffrage and shall be held by secret vote or by equivalent free voting procedures.

Article 22.

Everyone, as a member of society, has the right to social security and is entitled to realization, through national effort and international co-operation and in accordance with the organization and resources of each State, of the economic, social and cultural rights indispensable for his dignity and the free development of his personality.

Article 23.

- (1) Everyone has the right to work, to free choice of employment, to just and favourable conditions of work and to protection against unemployment.
- (2) Everyone, without any discrimination, has the right to equal pay for equal work.
- (3) Everyone who works has the right to just and favourable remuneration ensuring for himself and his family an existence worthy of human dignity, and supplemented, if necessary, by other means of social protection.

(4) Everyone has the right to form and to join trade unions for the protection of his interests.

Article 24.

Everyone has the right to rest and leisure, including reasonable limitation of working hours and periodic holidays with pay.

Article 25.

(1) Everyone has the right to a standard of living adequate for the health and well-being of himself and of his family, including food, clothing, housing and medical care and necessary social services, and the right to security in the event of unemployment, sickness, disability, widowhood, old age or other lack of livelihood in circumstances beyond his control.

(2) Motherhood and childhood are entitled to special care and assistance. All children, whether born in or out of wedlock, shall enjoy the same social protection.

Article 26.

(1) Everyone has the right to education. Education shall be free, at least in the elementary and fundamental stages. Elementary education shall be compulsory. Technical and professional education shall be made generally available and higher education shall be equally accessible to all on the basis of merit.

(2) Education shall be directed to the full development of the human personality and to the strengthening of respect for human rights and fundamental freedoms. It shall promote understanding, tolerance and friendship among all nations, racial or religious groups, and shall further the activities of the United Nations for the maintenance of peace.

(3) Parents have a prior right to choose the kind of education that shall be given to their children.

Article 27.

(1) Everyone has the right freely to participate in the cultural life of the community, to enjoy the arts and to share in scientific advancement and its benefits.

(2) Everyone has the right to the protection of the moral and material interests resulting from any scientific, literary or artistic production of which he is the author.

Article 28.

Everyone is entitled to a social and international order in which the rights and freedoms set forth in this Declaration can be fully realized.

Article 29.

(1) Everyone has duties to the community in which alone the free and full development of his personality is possible.

(2) In the exercise of his rights and freedoms, everyone shall be subject only to such limitations as are determined by law solely for the purpose of securing due recognition and respect for the rights and freedoms of others and of meeting the just requirements of morality, public order and the general welfare in a democratic society.

(3) These rights and freedoms may in no case be exercised contrary to the purposes and principles of the United Nations.

Article 30.

Nothing in this Declaration may be interpreted as implying for any State, group or person any right to engage in any activity or to perform any act aimed at the destruction of any of the rights and freedoms set forth herein.

Մ ԱՐԴ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՌՉԱԿԱԳԻՐ

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Հասարակական տեղեկատվության բաժին

ՆԵՐԱԾՄԱԿԱՆ

PREAMBLE

Քանի որ մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվության և հավասար ու անօտարելի իրավունքների ճանաչումը աշխարհի ազատության, արդարության ու խաղաղության հիմքն են.

Whereas recognition of the inherent dignity and of the equal and inalienable rights of all members of the human family is the foundation of freedom, justice and peace in the world,

Քանի որ մարդու իրավունքների նկատմամբ քամահրանքն ու արհամարհանքը հանգեցրել են մարդկության խիղճը խռոված բարբարոսական գործողությունների, և քանի որ այնպիսի աշխարհի ստեղծումը, ուր մարդիկ կվայելեն խոսքի ու համոզմունքների ազատություն և զերծ կլինեն վախից ու կարիքից հոչակվել է որպես մարդկանց բարձրագույն ձգտում.

Whereas disregard and contempt for human rights have resulted in barbarous acts which have outraged the conscience of mankind, and the advent of a world in which human beings shall enjoy freedom of speech and belief and freedom from fear and want has been proclaimed as the highest aspiration of the common people,

Քանզի անհրաժեշտ է, որպեսզի մարդը, որպես մի վերջին միջոցի, չդիմի ապստամբության ընդդեմ բռնության ու ճնշման, օրենքի իշխանությամբ պաշտպանել մարդու իրավունքները.

Whereas it is essential, if man is not to be compelled to have recourse, as a last resort, to rebellion against tyranny and oppression, that human rights should be protected by the rule of law,

Քանզի անհրաժեշտ է նպաստել ազգերի միջև բարեկամական հարաբերությունների զարգացմանը.

Whereas it is essential to promote the development of friendly relations between nations,

Քանզի Միավորված ազգերի ժողովուրդները կանոնադրության մեջ վերահավաստել են իրենց հավատը մարդու հիմնական իրավունքների, անձի արժանապատվության ու արժեքի, տղամարդու ու կֆոջ հավասար իրավունքների նկատմամբ և որոշել են ավելի մեծ ազատության պայմաններում նպաստել սոցիալական առաջընթացին ու կյանքի պայմանների բարելավմանը.

Whereas the peoples of the United Nations have in the Charter reaffirmed their faith in fundamental human rights, in the dignity and worth of the human person and in the equal rights of men and women and have determined to promote social progress and better standards of life in larger freedom,

Քանզի անդամ պետությունները պարտավորվել են Միավորված ազգերի հետ համագործակցությամբ հասնել մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների նկատմամբ համընդհանուր հարգանքի ու դրանց պահպանման.

Whereas Member States have pledged themselves to achieve, in co-operation with the United Nations, the promotion of universal respect for and observance of human rights and fundamental freedoms,

Քանզի այս իրավունքների ու ազատությունների համընդհանուր ըմբռնումը կարևորագույն նշանակություն ունի այս պարտավորության և լիարժեք իրագործման համար.

Whereas a common understanding of these rights and freedoms is of the greatest importance for the full realization of this pledge,

ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՆ ազդարարում է այս ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՉԱԿԱԳԻՐԸ՝ որպես առաջադրանք բոլոր ժողովուրդներին ու ազգերին, որպեսզի յուրաքանչյուր անհատ և հասարակության յուրաքանչյուր մարմին, մտքում մշտապես ունենալով այս Հռչակագիրը, ձգտի ուսուցման ու կրթության միջոցով նպաստել այս իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգալից վերաբերմունքին և ազգային ու միջազգային առաջադիմական միջոցառումներով ապահովել դրանց համընդհանուր արդյունավետ ճանաչումն ու պահպանումը թե անդամ պետությունների ժողովուրդների և թե դրանց իրավասու տարածքների ժողովուրդների կողմից:

Now, Therefore THE GENERAL ASSEMBLY proclaims THIS UNIVERSAL DECLARATION OF HUMAN RIGHTS as a common standard of achievement for all peoples and all nations, to the end that every individual and every organ of society, keeping this Declaration constantly in mind, shall strive by teaching and education to promote respect for these rights and freedoms and by progressive measures, national and international, to secure their universal and effective recognition and observance, both among the peoples of Member States themselves and among the peoples of territories under their jurisdiction.

Հոդված Ծ 1

Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար իրենց արժանապատվությամբ ու իրավունքներով: Նրանք ունեն բանականություն ու խիղճ և միմյանց պետք է եղբայրաբար վերաբերվեն:

Article 1.

All human beings are born free and equal in dignity and rights. They are endowed with reason and conscience and should act towards one another in a spirit of brotherhood.

Հոդված Ծ 2

Ամեն ոք ունի այս Հռչակագրում բերված բոլոր իրավունքներն ու ազատությունները առանց որևէ խտրության՝ հիմնված ցեղային, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքա կան կամ այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, ունեցվածքի, դասային պատկանելության կամ որևէ այլ կարգավիճակի վրա:

Ավելին, ոչ մի խտրականություն չպետք է լինի հիմնված երկրի կամ տարածքի, քաղաքական, իրավական, կամ միջազգային կարգավիճակի վրա, լինի դա անկախ, ինամարկյալ, ոչ ինքնակառավարվող կամ ինքնիշխանության որևէ այլ սահմանափակումով պետական կազմավորում, որին պատկանում է մարդը:

Article 2.

Everyone is entitled to all the rights and freedoms set forth in this Declaration, without distinction of any kind, such as race, colour, sex, language, religion, political or other opinion, national or social origin, property, birth or other status. Furthermore, no distinction shall be made on the basis of the political, jurisdictional or international status of the country or territory to which a person belongs, whether it be independent, trust, non-self-governing or under any other limitation of sovereignty.

Հոդվա ծ 3

Յուրաքանչյուր ոք ունի ապրելու, ազատության ու անձի անձեռնմխելիության իրավունք:

Article 3.

Everyone has the right to life, liberty and security of person.

Հոդվա ծ 4

Ոչ ոք չպետք է լինի ստրկության կամ անազատվիճակում. պետք է արգելվեն ստրկատիրության ու ստրուկների առուծախի բոլոր ձևերը:

Article 4.

No one shall be held in slavery or servitude; slavery and the slave trade shall be prohibited in all their forms.

Հոդվա ծ 5

Ոչ ոք չպետք է ենթարկվի կտտանքների, դաժան, անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի կամ պատժի:

Article 5.

No one shall be subjected to torture or to cruel, inhuman or degrading treatment or punishment.

Հոդվա ծ 6

Ամեն ոք, ուր էլ որ լինի, իրավունք ունի ճանաչվել որպես իրավասուբյեկտ:

Article 6.

Everyone has the right to recognition everywhere as a person before the law.

Հոդվա ծ 7

Բոլորը հավասար են օրենքի առջև և, առանց որևէ խտրականության, ունեն օրենքով հավասար պաշտպանվելու իրավունք: Բոլորը ունեն հավասար պաշտպանության իրավունք՝ ընդդեմ ցանկացած խտրականության, որով խախտվում է այս Հռչակագիրը, և ընդդեմ նման խտրականության մղող ցանկացած սադրանքի:

Article 7.

All are equal before the law and are entitled without any discrimination to equal protection of the law. All are entitled to equal protection against any discrimination in violation of this Declaration and against any incitement to such discrimination.

Հոդվա ծ 8

Ամեն ոք ունի ազգային լիազոր դատարանների միջոցով իր իրա վունքների արդյունավետ վերականգնման իրավունք, եթե խախտվում են սահմանադրությամբ կամ օրենքով սահմանված նրա հիմնական իրավունքները:

Article 8.

Everyone has the right to an effective remedy by the competent national tribunals for acts violating the fundamental rights granted him by the constitution or by law.

Հոդվա ծ 9

Ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական կալանքի, բանտարկության կամ արտաքսման:

Article 9.

No one shall be subjected to arbitrary arrest, detention or exile.

Հոդվա ծ 10

Ամեն ոք իր իրավունքների ու պարտականությունների սահմանման համար և իր դեմ ցանկացած քրեական մեղադրանքի դեպքում, լիակատար հավասարության հիման վրա, իրավունք ունի, որ իր գործը արդարացի ու հրապարակայնորեն լսվի անկախ ու անկողմնապահ դատարանի կողմից:

Article 10.

Everyone is entitled in full equality to a fair and public hearing by an independent and impartial tribunal, in the determination of his rights and obligations and of any criminal charge against him.

Հոդվա ծ 11

(1) Հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր մարդ իրավունք ունի անմեղ համարվել քանի դեռ նրա մեղքը չի ապացուցված օրենքով նախատեսված հրապարակային դատաքննությամբ, որի ժամանակ ապահովվեն նրա պաշտպանության համար բոլոր անհրաժեշտ երաշխիքները:

(2) Ոչ ոք չի կարող դատապարտվել որպես հանցագործ որևիցե արարքի կամ բացթող ման համար, որը կատարվել է այնպիսի ժամանակ, երբ այն ազգային կամ միջազգային օրենքով հանցագործություն չի համարվել: Չի կարող սահմանվել նաև ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառվում էր հանցագործության կատարման ժամանակ:

Article 11.

(1) Everyone charged with a penal offence has the right to be presumed innocent until proved guilty according to law in a public trial at which he has had all the guarantees necessary for his defence.

(2) No one shall be held guilty of any penal offence on account of any act or omission which did not constitute a penal offence, under national or international law, at the time when it was committed. Nor shall a heavier penalty be imposed than the one that was applicable at the time the penal offence was committed.

Հոդվա ծ 12

Ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական միջամտության իր անձնական ու ընտանեկան կյանքի նկատմամբ, իր տան, թղթակցության և կամ իր պատվի ու համբավի դեմ կամայական ոտնձգության: Ամեն ոք ունի օրենքով պաշտպանվելու իրավունք ընդդեմ նման միջամտության կամ ոտնձգության:

Article 12.

No one shall be subjected to arbitrary interference with his privacy, family, home or correspondence, nor to attacks upon his honour and reputation. Everyone has the right to the protection of the law against such interference or attacks.

Հոդվա ծ 13

(1) Ամեն ոք ունի տեղաշարժվելու և բնակության վայր ընտրելու ազատության իրավունք յուրաքանչյուր պետության սահմաններում:

(2) Ամեն ոք ունի ցանկացած երկրից, այդ թվում իր երկրից հեռանալու և իր երկիր վերադառնալու իրավունք:

Article 13.

(1) Everyone has the right to freedom of movement and residence within the borders of each state.

(2) Everyone has the right to leave any country, including his own, and to return to his country.

Հոդվա ծ 14

(1) Ամեն ոք իրավունք ունի այլ երկրներում հետապնդումից ապաստան որոնել և ապաստանից օգտվել:

(2) Այս իրավունքը չի կարող գործադրվել այնպիսի ոչ քաղաքական հանցագործությունների կամ արարքների համար հարուցված հետապնդումների դեպքում, որոնք հակասում են Միավորված ազգերի նպատակներին ու սկզբունքներին:

Article 14.

(1) Everyone has the right to seek and to enjoy in other countries asylum from persecution.

(2) This right may not be invoked in the case of prosecutions genuinely arising from non-political crimes or from acts contrary to the purposes and principles of the United Nations.

Հոդվա ծ 15

(1) Ամեն ոք ունի քաղաքացիության իրավունք:

(2) Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել իր քաղաքացիությունից կամ քաղաքացիությունը փոխելու իրավունքից:

Article 15.

(1) Everyone has the right to a nationality.

(2) No one shall be arbitrarily deprived of his nationality nor denied the right to change his nationality.

Հոդվա ծ 16

(1) Չափահաս տղամարդիկ ու կանայք, առանց որևէ ցեղային, ազգային կամ կրոնական սահմանափակման, իրավունք ունեն ամուսնանալ և ընտանիք հիմնել: Նրանք հավասար իրավունքներ ունեն ամուսնանալիս, ամուսնության ընթացքում և ամուսնալուծության ժամանակ:

(2) Ամուսնությունը կարող է կայանալ միայն ամուսնացող կողմերի լիարժեք ու ազատ համաձայնության դեպքում:

(3) Ընտանիքը հասարակությա ն բնական ու հիմնական բջիջն է և պաշտպանվելու իրավունք ունի հասարակության ու պետության կողմից:

Article 16.

(1) Men and women of full age, without any limitation due to race, nationality or religion, have the right to marry and to found a family. They are entitled to equal rights as to marriage, during marriage and at its dissolution.

(2) Marriage shall be entered into only with the free and full consent of the intending spouses.

(3) The family is the natural and fundamental group unit of society and is entitled to protection by society and the State.

Հոդվա ծ 17

(1) Ամեն ոք ունի սեփականություն ունենալու իրավունք՝ ինչպես մենակ, այնպես էլ ուրիշների հետ միասին:

(2) Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել իր սեփականությունից:

Article 17.

(1) Everyone has the right to own property alone as well as in association with others.

(2) No one shall be arbitrarily deprived of his property.

Հոդվա ծ 18

Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի ու դավանանքի ազատության իրավունք. այս իրավունքը ներառում է իր դավանանքը կամ համոզմունքները փոխելու ազատություն և իր դավանանքին կամ համոզմունքներին հետևելու ազատություն, մենակ կամ ուրիշների հետ համատեղ, հրապարակայնորեն կամ գաղտնի՝ քարոզի, ժամերգության, կրոնական ու ծիսական արարողությունների ձևով:

Article 18.

Everyone has the right to freedom of thought, conscience and religion; this right includes freedom to change his religion or belief, and freedom, either alone or in community with others and in public or private, to manifest his religion or belief in teaching, practice, worship and observance.

Հոդվա ծ 19

Ամեն ոք ունի համոզմունքներ ունենալու և արտահայտվելու իրավունք. այս իրավունքը ներառում է համոզմունքներին անարգել հավատարիմ մնալու և տեղեկություններ ու գաղափարներ որոնելու, ստանալու ու տարածելու ազատություն, լրատվության ցանկացած միջոցներով, անկախ պետական սահմաններից:

Article 19.

Everyone has the right to freedom of opinion and expression; this right includes freedom to hold opinions without interference and to seek, receive and impart information and ideas through any media and regardless of frontiers.

Հոդվա ծ 20

- (1) Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ու միություններ կազմելու իրավունք:
- (2) Ոչ ոք չի կարող հարկադրաբար անդամակցվել որևէ միության:

Article 20.

- (1) Everyone has the right to freedom of peaceful assembly and association.
- (2) No one may be compelled to belong to an association.

Հոդվա ծ 21

- (1) Յուրաքանչյուր ոք իրավունք ունի մասնակցել իր երկրի կառավարմանը՝ անմիջաբար կամ ազատ ընտրված ներկայացուցիչների միջոցով:
- (2) Յուրաքանչյուր ոք իր երկրում ունի պետական ծառայություն կատարելու հավասար իրավունք:
- (3) Ժողովրդի կամքը պետք է լինի կառավարության իրավագործության հիմքը. այս կամքի արտահայտությունը պետք է լինեն պարբերական ու անեղծ ընտրությունները, որոնք պետք է իրագործվեն համընդհանուր ու հավասար ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկության կամ համարժեք ազատ ընտրական ընթացակարգերի միջոցով:

Article 21.

- (1) Everyone has the right to take part in the government of his country, directly or through freely chosen representatives.
- (2) Everyone has the right of equal access to public service in his country.
- (3) The will of the people shall be the basis of the authority of government; this will shall be expressed in periodic and genuine elections which shall be by universal and equal suffrage and shall be held by secret vote or by equivalent free voting procedures.

Հոդվա ծ 22

Յուրաքանչյուր ոք, որպես հասարակության անդամ, սոցիալական ապահովության իրավունք ունի, օգտվում է իր արժանապատվության և իր անձի ազատ զարգացման համար անհրաժեշտ տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքներից ազգային ջանքերի ու միջազգային համագործակցության միջոցով, յուրաքանչյուր պետության կառուցվածքին ու ռեսուրսներին համապատասխան:

Article 22.

Everyone, as a member of society, has the right to social security and is entitled to realization, through national effort and international co-operation and in accordance with the organization and resources of each State, of the economic, social and cultural rights indispensable for his dignity and the free development of his personality.

Հոդվա ծ 23

(1) Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի, աշխատանքի ազատ ընտրության, արդարացի ու նպաստավոր աշատանքային պայմանների և գործազրկությունից պաշտպանվելու իրավունք:

(2) Յուրաքանչյուր ոք, առանց որևիցե խտրականության, ունի հավասար աշխատանքի դիմաց հավասարվարձատրության իրավունք:

(3) Յուրաքանչյուր ոք ունի արդարացի ու համապատասխան վարձատրության իրավունք, որով ապահովվի մարդկային արժանապատվությանը վայել իր ու իր ընտանիքը գոյությունը, իսկ անհրաժեշտությա ն դեպքում լրացվի սոցիալական ապավության այլ միջոցներով:

(4) Յուրաքանչյուր ոք ունի իր շահերը պաշտպանելու համար արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունք:

Article 23.

(1) Everyone has the right to work, to free choice of employment, to just and favourable conditions of work and to protection against unemployment.

(2) Everyone, without any discrimination, has the right to equal pay for equal work.

(3) Everyone who works has the right to just and favourable remuneration ensuring for himself and his family an existence worthy of human dignity, and supplemented, if necessary, by other means of social protection.

(4) Everyone has the right to form and to join trade unions for the protection of his interests.

Հոդվա ծ 24

Յուրաքանչյուր ոք ունի հանգստի ու ժամանցի, այդ թվում՝ աշխատանքային ժամերի չափավոր սահմանափակման և պարբերական վճարովի արձակուրդների իրավունք:

Article 24.

Everyone has the right to rest and leisure, including reasonable limitation of working hours and periodic holidays with pay.

Հոդվա ծ 25

(1) Յուրաքանչյուր ոք ունի կենսամակարդակի իրավունք, որը իր և իր ընտանիքի համար ապահովի առողջությունն ու բարեկեցությունն, այդ թվում՝ սնունդ, հագուստ, բնակարանն ու բժշկական սպասարկում, անհրաժեշտ սոցիալական ծառայություններ և ապահովագրության իրավունք գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, այրիության, ծերության և այն դեպքերում, երբ գոյության միջոցների ձեռքբերումը չի պայմանավորված իրենից կախված հանգամանքներով:

(2) Մայրերն ու մանուկներն ունեն հատուկ հոգածության ու օժանդակության իրավունք: Բոլոր երեխաները՝ ծնված ամուսնությունից կամ արտասամուսնական կապերից, օգտվում են նույն սոցիալական պաշտպանությունից:

Article 25.

(1) Everyone has the right to a standard of living adequate for the health and well-being of himself and of his family, including food, clothing, housing and medical care and necessary social services, and the right to security in the event of unemployment, sickness, disability, widowhood, old age or other lack of livelihood in circumstances beyond his control.

(2) Motherhood and childhood are entitled to special care and assistance. All children, whether born in or out of wedlock, shall enjoy the same social protection.

Հոդված 26

(1) Յուրաքանչյուր ոք ունի ունի կրթության իրավունք: Կրթությունը, առնվազան տարրական ու հանրակրթական փուլերում, պետք է լինի անվճար: Տարրական կրթությունը պետք է լինի պարտադիր: Տեխնիկական ու մասնագիտական կրթությունը լինելու է ընդհանուրի համար մատչելի, իսկ բարձրագույն կրթությունը՝ բոլորի համար հավասարապես մատչելի, հիմնված ընդունակությունների վրա :

(2) Կրթությունը պետք է նպատակաուղղված լինի անձի լիարժեք զարգացմանը և մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդմանը: Այն պետք է նպաստի բոլոր ազգերի, ցեղային կամ կրոնական խմբերի միջև փոխըմբռնմանը, հանդուրժողականությանն ու բարեկամությանը և էլ ավելի նպաստի Միավորված ազգերի խաղաղապահական գործունեությանը:

(3) Ծնող ներսն ունեն իրենց երեխա ներին տրվող կրթ ութ յա ն տեսա կի ընտրութ յա ն առ ջնա յին իրա վունք:

Article 26.

(1) Everyone has the right to education. Education shall be free, at least in the elementary and fundamental stages. Elementary education shall be compulsory. Technical and professional education shall be made generally available and higher education shall be equally accessible to all on the basis of merit.

(2) Education shall be directed to the full development of the human personality and to the strengthening of respect for human rights and fundamental freedoms. It shall promote understanding, tolerance and friendship among all nations, racial or religious groups, and shall further the activities of the United Nations for the maintenance of peace.

(3) Parents have a prior right to choose the kind of education that shall be given to their children.

Հոդվա ծ 27

(1) Յուրաքանչյուր ոք ունի իր համայնքի մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու, արվեստը դրվատելու, գիտական առաջընթացին մասնակցելու և դրա բարիքներից օգտվելու իրավունք:

(2) Յուրաքանչյուր ոք պաշտպանության իրավունք ունի իր բարոյական ու նյութական շահերի համար, որոնք արդյունք են իր իսկ հեղինակած գիտական, գրական կամ գեղարվեստական ցանկացած աշխատանքի:

Article 27.

(1) Everyone has the right freely to participate in the cultural life of the community, to enjoy the arts and to share in scientific advancement and its benefits.

(2) Everyone has the right to the protection of the moral and material interests resulting from any scientific, literary or artistic production of which he is the author.

Հոդվա ծ 28

Յուրաքանչյուր ոք ունի սոցիալական ու միջազգային կարգուկանոնի իրավունք, որի դեպքում լիովին իրագործելի են այս Հռչակագրում շարադրված իրավունքներն ու ազատությունները:

Article 28.

Everyone is entitled to a social and international order in which the rights and freedoms set forth in this Declaration can be fully realized.

Հոդվա ծ 29

(1) Յուրաքանչյուր ոք պարտականություններ ունի համայնքի նկատմամբ, ուր և միայն հնարավոր է իր անձի ազատ ու լիարժեք զարգացումը:

(2) Իր իրավունքներն ու ազատություններն իրականացնելիս, յուրաքանչյուր ոք պետք է ենթակա լինի միմիայն այնպիսի սահմանափակումների, որոնք օրենքով սահմանված են ուրիշների իրա վունքների ու ազատութ յունների համար պատշաճ ճանաչում ու հարգանք ապահովելու և բարոյականության, հասարակական կարգուկանոնի ու ընդհանուր

բարեկեցության արդարացի պահանջները ժողովրդավարական հասարակարգում բավարարելու համար:

(3) Այս իրավունքների ու ազատությունների իրականացումը ոչ մի դեպքում չպետք է հակասի Միացյալ ազգերի նպատակներին ու սկզբունքներին:

Article 29.

(1) Everyone has duties to the community in which alone the free and full development of his personality is possible.

(2) In the exercise of his rights and freedoms, everyone shall be subject only to such limitations as are determined by law solely for the purpose of securing due recognition and respect for the rights and freedoms of others and of meeting the just requirements of morality, public order and the general welfare in a democratic society.

(3) These rights and freedoms may in no case be exercised contrary to the purposes and principles of the United Nations.

Հոդվա ծ 30

Այս Հռչակագրում ոչ մի բան չի կարող մեկնաբանվել որպես որևէ իրավունքի տրամադրում որևիցե պետության, մարդկանց խմբի կամ առանձին անձանց զբաղվելու մի որևէ գործունեությամբ կամ արարքով, որոնք ուղղված լինեն Հռչակագրում շարադրված ազատությունների ու իրավունքների ոչնչացմանը:

Article 30.

Nothing in this Declaration may be interpreted as implying for any State, group or person any right to engage in any activity or to perform any act aimed at the destruction of any of the rights and freedoms set forth herein.